**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

16 ՄԱՐՏԻ 2016թվականի N 12

## ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ N 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով

ավագանին որոշեց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2016 թվականի մարտի 16 -ի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը՝համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ

Մարտի16-ի N 12 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

2. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

3.ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

Ավագանու անդամներ

Արմեն Խաչատրյան

Արտակ Հերիքյան

Տիգրան Սարգսյան

Ավագ Միքայելյան

Լևոն Թադևոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2016թվականի N 13

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշեց՝

1.Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի Տանձուտ համայնքի ավագանու
2016 թվականի մարտի16-ի
թիվ 13 որոշման

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացված
դրամական օգնություն

1.Կարինե Գալուստի Սաֆարյան -30000 / երեսուն հազար դրամ

Ավագանու անդամներ

1.Թադևոսյան Լևոն
2.Խաչատրյան Արմեն
3.Հերիքյան Արտակ
4.Միքայելյան Ավագ
5.Սարգսյան Տիգրան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2016թվականի N 14 Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015-2019ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով,53-րդ հոդվածով,«իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշեց՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի 2015-2019 թվականների զարգացման քառամյա ծրագիրը՝համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱԿԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ [illegible]ՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2016-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Մ.Պետրոսյանը

Հաստատվել է համայնքի ավագանու 2016թվականի մարտի 16-ի թիվ 3 արտահերթ նիստում:

Տանձուտ 2016 թվական

Հավելված1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Տանձուտ
համայնքի ավագանու
16 մարտի 2016թ.
թիվ 10-Ն որոշում

# ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի 2015-2019 թվականների քառամյա ծրագիր

## *Պատմական ակնարկ*

Արմավիրի մարզի Տանձուտ գյուղը հիմնադրվել է 1828-1829 թթ., Արմտլու անվանմամբ ,Արևմտյան Հայաստանի էրզրումի նահանգի Ալաշկերտ և Բայազետ գավառներից գաղթած 24 ընտանիքներով:

Գյուղը Արմտլու է անվանվել տարածված տանձենու այգիների պատճառով: Տանձուտ գյուղի կենտրոնում է գտնվում 1912թ. կառուցված սուրբ Սահակ եկեղեցին,որը 1995թ.վերակառուցվել է և այժմ հանդիսանում է Արմավիրի մարզի գործող եկեղեցիներից մեկը: Գյուղը Տանձուտ է վերանվանվել 1946թ-ից:Այս տարիներին այստեղ բնակություն են հաստատել Տաուշից և Թալինից գաղթած մոտ 19 ընտանիք:Բնակչության մեծ մասը հայեր են ,բայց զգալի տոկոս են կազմում ՝ մոտ 25% եզդիները:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, գրադարան, մշակույթի տուն, բուժամբուլատորիա , գերեզմանատուն ,Հայրենական պատերազմի զոհերին նվիրված հուշարձան: Հայրենական պատերազմին գյուղից մասնակցել են 45 մարդ,որոնցից 38 զոհվել են:

Տանձուտ գյուղը ունի խմելու ջրի և կոյուղու ցանց,հեռախոսակապ գազիֆիկացված է:

## *Աշխարհագրական դիրքը*

Գյուղը սահմանամերձ է ,գտնվում է մարզկենտրոնից 11կմ հեռավորության վրա,ունի 772.6քառ կմ/հա տարածք:

Գյուղը շրջապատված է փոքրիկ լճակներով:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 853 մ բարձրության վրա , օդի միջին ջերմաստիճանը 9$^{O}$ է, բացարձակ մինիմումը -35$^{O}$, բածարձակ մաքսիմումը +42$^{O}$: Տանձուտը սահմանակից է Այգեշատ, Արևիկ, Արգավանդ,Ջանֆիդա և Եղեգնուտ համայնքներին:

## *Ժողովրդագրություն*

Տանձուտ գյուղն ունի 2027 բնակիչ, որի 46% տղամարդիկ են,25% եզդիներ են: Ադրբեջանի հանրապետությունից 1989թ 13 ընտանիք բռնագաղթել են Տանձուտ,որոնցից 16հոգին ներկայումս գյուղի մշտական բնակիչ են:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

1. երեխաներ (0-5տարեկան) 133 մարդ
2. դպրոցականներ (6-17) 287 մարդ
3. 18-65 տարեկան 1470 մարդ
4. թոշակառուներ 243 մարդ
5. հաշմանդամներ 46 մարդ
6. աշխատունակներ 1250 մարդ
7. ընտանիքների/ծխերի/թիվը 471 մարդ
8. գրանցված են «փարոս»-ում 26 մարդ
9. գրանցված ընտրողների թիվը 1495մարդ
10. երկարատև բացականեր 130 մարդ

## *ՏԻՄ*

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի և ավագանու 7 անդամների կողմից.որոնք ընտրվում են չորս տարին մեկ անգամ:
Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կազմով`

- տեղակալ 1դրույք
- օգնական 1դրույք
- աշխատակազմի քարտուղար 1դրույք
- առաջատար մասնագետ 3դրույք
- առաջին կարգի մասնագետ 1դրույք
- երկրորդ կարգի մասնագետ 1դրույք
- էլեկտրիկ 1դրույք
- մեքենագրուհի 1դրույք
- հավաքարար 1դրույք
- պահակ 1դրույք
- վարորդ 1դրույք

Համայնքի ղեկավարի ենթակա հիմնարկներն են՝
Մշակույթի տուն՝

- տնօրեն 1դրույք
- հավաքարար 1դրույք
- պահակ 1դրույք

Գրադարան

- վարիչ 1դրույք
- գրադարանավար 1դրույք

Մանկապարտեզ ՀՈԱԿ

- տնօրեն 1դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 28 հոգուց:

## *Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը*

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է կառավարության 14.03.1997թ.-ի թիվ 51 որոշմամբ և բերված է հավելված 1-ում:

Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է:Խմելու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է 1969թ , ջրամատակարարման խողովակաշարի երկարությունը կազմել է 6060մ,1996թ.անցկացվել է ևս 180մ ջրագիծ: Ջրագծերի մաշվածություն հետևանքով հաճախակի են խափանումները,անձրևաջրերն ու կեղտաջրերը ներթափանցում են խմելու ջրի համակարգ,որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը:

Համայնքն ունի նաև կոյուղու համակարգ կառուցված 1969թ. 5280մ երկարությամբ :

Հանրապետական նշանակության /Արմավիր –Մարգարա / ճանապարհը վերանորոգվել է 2010թ: Միջհամայնքային /Տանձուտ-Արևիկ/ 1.1կմ ճանապարհը,գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհները կարիք ունեն վերանորոգման:

## *Բնակարանային տնտեսություն*

Համայնքում կա 357 առանձնատուն `45200քառ.մ տարածքով :Կան բազմաթիվ կիսակառույց տներ,որոնք սոցիալական վատ վիճակի պատճառով ավարտել չեն կարողանում:
Քառամյա ծրագրով նախատեսվում է գծագրել համայնքի գլխավոր հատակագիծը :

## *Հողատարածքների օգտագործումը*

- Համայնքի վարչական տարածքը 772.6հա որից`
- Վարելահողեր 344.3հա
- համայնքային սեփականության հողեր 230.3հա
- Արտադրական 15.3հա
- Գերեզմանատուն 3.18հա
- Տնամերձ հողեր 111.2հա
- սեփականաշնորհված հողեր 283.9հա որից`
- Բազմամյա տնկարկներ 22.3հա որից`
- Խաղողի այգի 9.95հա
- պտղատու այգի 12.35հա
- մեկ հողաբաժնի չափը 0.4հա
- հուշարձան 0.38հա
- եկեղեցի 0.05հա
- դպրոց 2.48հա
- Ջրային տարածք 16.94հա

## *Գյուղատնտեսություն*

Համայնքի գյուղացիական տնտեսությունները զբաղվում են ցորենի, առվույտի և այլ բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: 2015թ. գյուղատնտեսական և անասնապահական մթերքների հիմնական տեսակների արտադրությունը մեկ հեկտարի հաշվով`

| | |
|---|---|
| ցորեն | 50g |
| առվույտ | 200g |
| պտուղ | 300g |
| խաղող | 200g |

բանջարբոստան. 400-500g
միս 500g , կաթ 400, մեղր 10g , ձու 5000հատ
Ցանքատարածություններ՝

| | |
|---|---|
| հացահատիկ | 91հա |
| առվույտ | 63հա |
| բանջարաբոստ | 252հա |
| պտուղ | 12հա |
| խաղող | 10հա |

Գյուղացիական տնտեսությունների 30% զբաղվում է անասնապահությամբ ,հիմնականում խոշոր եղջերավոր՝1422գլուխ , մանր եղջերավոր անասուններ՝803գլուխ ,խոզեր՝385գլուխ և թռչուններ՝2286թև:Արոտավայրերի բացակայության պատճառով անասնապահության բնագավառում առաջանում են դժվարություններ:

Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը՝

| | |
|---|---|
| համայքային սեփականության | 0 |
| մասնավոր սեփականություն | |
| տրակտորներ | 30 |
| բեռնատար ավտոմեքենա | 58 |
| տրակտորային կցասայլեր | 9 |
| տրակտորային հնձիչներ | 1 |
| տրակտորային շարքացան | 5 |
| տրակտորային գութաններ | 7 |
| կուլտիվատորներ | 4 |

## *Կրթություն*

Գյուղն ունի 1959 թ. կառուցված միջնակարգ դպրոց, որի տանիքը և պատուհանները վերանորոգվել են 2012թ:Դպրոցն ունի 273 աշակերտ, 43 աշխատատեղ,որից 32 ուսուցիչներ : Դպրոցի առաջնային խնդիրներից է շենքի հետնամասի պատի ամրացումը,հատակի և դռների վերանորոգումը:

Գյուղն ունի 1962 թ. կառուցված 90տեղանոց երկհարկանի տիպային մանկապարտեզի շենք, որը այդ ընթացքում ենթարկվել է մասնակի վերանորոգումների: Սակայն գործում է 2 խումբ ,ունի մինչև 50 3-6 տարեկան հաճախող երեխաներ, 10աշխատատեղ: Ներկայումս մանկապարտեզը կարիք ունի գույքի,գազաֆիկացման և կապիտալ վերանորոգման :

## *Մշակույթ և սպորտ*

Համայնքը ունի 1955թ կառուցված 150 տեղանոց մեկ հարկանի մշակույթի տուն,որը գտնվում է անմխիթար վիճակում և կարիք ունի հիմնանորոգման:Գործող գրադարանն ունի 9000կտոր գիրք ,շենքը գտնվում է ոչ բարվոք վիճակում:

Գյուղի կենտրոնում է գտնվում 1975թ կառուցված Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը,որտեղ ամեն տարի հաղթանակի օրվա կապակցությամբ կազմակերպվում են միջոցառումներ:

Գյուղի բնակչության հիմնական մասը հայ առաքելական եկեղեցու հետնորդներ և հաճախում են գյուղի գործող եկեղեցի:

## *Առողջապահություն*

Գյուղում գործում է մեկ բուժամբուլատորիա ,որի շենքը գտնվում է շատ անմխիթար վիճակում:Շենքը կառուցվել է 1969թ. և լուրջ վերանորոգման կարիք ունի : Ունի 7 աշխատատեղ:

Համայնքում կանոնավոր կազմակերպվում է աղբահանություն , համայնքն ունի իր տարածքում գործող աղբավայր:Համայնքում պարբերաբար կատարվում են կանաչապատման աշխատանքներ, հաշվառվել և գույքագրվել է փողոցների ,կանաչապատ տարածքների ծառերը:

## *Համայնքի ուժեղ կողմերը*

- Համայնքն ունի ԲՈՒՀ-ի ավելի քան 120շրջանավարտ,տարբեր մասնագիտությունների գծով,որոնք կարողանում են կազմակերպել համայնքի կրթության ու դաստիարակության,մշակութային ,գյուղատնտեսության աշխատանքները
- Գյուղը շրջապատված է լճերով ,որոնց շնորհիվ կարելի է ստեղծել գեղեցիկ հանգստի գոտի

- Արմավիր –Մարգարա միջհամայնքային ճանապարհը բարվոք վիճակում է
- Գյուղը ունի գյուղմթերքներ արտադրելու մեծ ներուժ

*Համայնքի թույլ կողմերը*

- ճանապարհների,խմելու ջրի և ոռոգման ջրի ներհամայնքային համակարգերի վատ վիճակը
- Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ
- Կրթության և մշակույթի օջախների անմխիթար վիճակը
- Արտադրված գյուղմթերքների իրացման խնդիրը

| Ծրագիր 1 | Նպատակը |
|---|---|
| Խմելու ջրի և կոյուղու ներհամայնքային համակարգի վերանորոգում | 1. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը<br>2.ապահովել համայնքը շուրջօրյա ջրով<br>3.կանխել կեղտաջրերինէրթափան-ցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները<br>4.նվազեցնել խողովակների մաշվածու-թյունից առաջացած ջրի կորուստները |
| Ծրագրի համառոտ նկարագրությունը | |
| Բնակչության կենցաղային մակարդակի բարձրացում | |
| Ակնկալվող արդյունքները | Շահառուներ |
| 1.Բարելավված կենսամակարդակ<br>2.Սոցիալական լարվածության թուլացում<br>3.Առողջական վիճակի բարելավում | 1.Գյուղացիական տնտեսություններ<br>2.Համայնքի ազգաբնակչությունը |
| Հնարավոր մասնակիցներ<br>Համայնքապետարան | Հնարավոր ներդրողներ<br>Մասնավոր ներդրողներ |
| Նախնական պայմաններ<br>Առկա ջրի և կոյուղու գծեր | Ռիսկի գործոն<br>Ներդրողների բացակայություն |
| Հաշվարկված ծախսերը<br>Մոտ10.000.000 ՀՀդրամ | Համայնքի համաֆինանսավորումը<br>մինչև 20% |
| Իրականացման ժամկետները | Արդյունքներն ակնկալվում են մինչև |

| | |
|---|---|
| 2016թ. | 2019թ. |

| Ծրագիր 2 | Նպատակը |
|---|---|
| Համայնքային նշանակության գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում | 1. Համայնքի տնտեսական զարգացումը |
| Ծրագրի համառոտ նկարագրությունը | |
| Այս ծրագիրը նպատակ ունի բարելավել ճանապարհների վիճակը,ինչը դրական կազդի գյուղատնտեսական մթերքների արտադրության և սպառման վրա | |
| Ակնկալվող արդյունքները | Շահառուներ |
| 1. Կենսամակարդակ բարելավում<br>2.Գյուղ արտադրանքի ակտիվ շուկայահան<br>3.Գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճ | 1.Գյուղացիական տնտեսություններ<br>2.Համայնքի ազգաբնակչությունը |
| Հնարավոր մասնակիցներ<br>Համայնքապետարան | Հնարավոր ներդրողներ<br>Մասնավոր ներդրողներ |
| Նախնական պայմաններ<br>Առկա ճանապարհներ | Ռիսկի գործոն<br>Ներդրողների բացակայություն |
| Հաշվարկված ծախսերը<br>Մոտ 90.000.000 ՀՀդրամ | Համայնքի համաֆինանսավորումը մինչև 20% |
| Իրականացման ժամկետները | Արդյունքները ակնկալվում են մինչև |
| 2016թ. | 2019թ. |

| Ծրագիր 3 | Նպատակը |
|---|---|
| Մշակույթի տան վերանորոգում | 2.Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում |
| Ծրագրի համառոտ նկարագրությունը | |
| Համայնքի մշակույթի տան անմխիթար վիճակում գտնվող շենքի վերանորոգումը կնպաստի բնակչությանը, աշխատանքից ազատ ժամերին հանգստանալու և զբաղվելու | |
| Ակնկալվող արդյունքները | Շահառուներ |
| 1. Հանգստի ժամանակի հետաքրքիր և արդյունավետ անցկացում<br>2. Բնակիչների հոգևոր և կրթական զարգացման ապահովում | 1.Գյուղացիական տնտեսություններ<br>2.Համայնքի ազգաբնակչությունը |
| Հնարավոր մասնակիցներ<br>Համայնքապետարան | Հնարավոր ներդրողներ<br>Մասնավոր ներդրողներ |
| Նախնական պայմաններ<br>Առկա շենք | Ռիսկի գործոն<br>Ներդրողների բացակայություն |
| Հաշվարկված ծախսերը<br>Մոտ 40.000.000 ՀՀդրամ | Համայնքի համաֆինանսավորումը<br>մինչև 20% |
| Իրականացման ժամկետները | Արդյունքները ակնկալվում են մինչև |
| 2016թ. | 2019թ. |

| Ծրագիր 4 | Նպատակը |
|---|---|
| Մանկապարտեզի շենքի վերանորոգում | 2.Համայնքի սոցիալ-տնտեսական մակարդակի բարձրացում |

**Ծրագրի համառոտ նկարագրությունը**

Համայնքի մանկապարտեզի անմխիթար վիճակում գտնվող շենքի վերանորոգում
կնպաստի բնակչության աշխատանքի որակի բարձրացմանը, ինչը
որ փոքր երեխաների խնամքի հարցը կլուծի:

| Սպասվող արդյունքները | Շահառուներ |
|---|---|
| 1. Համայնքի երեխաների կուլտուր կենցաղային մակարդակի բարձրացում<br>2. Բնակիչների արտադրական որակի բարձրացում | 1.Գյուղացիական տնտեսություններ<br>2.Համայնքի ազգաբնակչություն |
| Հնարավոր մասնակիցներ<br>Համայնքապետարան | Հնարավոր ներդրողներ<br>Մասնավոր ներդրողներ |
| Նախնական պայմաններ<br>Առկա շենք | Ռիսկի գործոն<br>Ներդրողների բացակայություն |
| Հաշվարկված ծախսերը<br>Մոտ 100.000.000 ՀՀդրամ | Համայնքի համաֆինանսավորումը<br>մինչև 20% |

[illegible]
[illegible]

| | |
|---|---|
| [illegible] | [illegible] |

# ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Արմավիրի մարզի Տանձուտ համայնքում այն ունի հետևյալ պատկերը

/հազար դրամ/

| հ/հ | եկամուտների տեսակը | 2015թ. փաստ. | 2016թ. նախատեսված | 2017թ. կանխատեսում | 2018թ. կանխատեսում | 2019թ. կանխատեսում |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | | | | |
| 1.1 | հողի հարկ | 4321.4 | 8400.0 | 8500.0 | 9000.0 | 9000.0 |
| 1.2 | գույքահարկ | 3555.6 | 3515.0 | 3700.0 | 3700.0 | 3800.0 |
| 2. | ՏՈՒՐՔԵՐ | | | | | |
| 2.1. | տեղական տուրք | 390.8 | 470.0 | 500.0 | 500.0 | 500.0 |
| 2.2 | մատուցվող ծառայություն խմելու ջուր | 460.6 | 1500.0 | 2000.0 | 2500.0 | 2500.0 |
| 3. | ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | | | | |
| 3.1 | հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վճարներ | 1657.2 | 1800.0 | 2000.0 | 2000.0 | 2000.0 |
| 3.2 | ապօրինի շինությունների օրինականացում | 0 | | 0 | | |
| 3.3. | պետբյուջեից ֆինանսավորման համահարթեցման սկզբունքով դոտացիա | 29309.8 | 31235.3 | 0 | 0 | 0 |
| 4. | հողի օտարումից մուտքեր | 0 | 1000.0 | 2000.0 | 3000.0 | 4000.0 |

# *Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները*

| h/h | Ցուցանիշներ | Չափի միավոր | 2015թ փաստ. | 2016թ. կանխ. | 2017թ. կանխ | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի տարածք | հա | 772.6 | | | | |
| 2 | Բնակչության թիվը | մարդ | 2027 | 2033 | 2038 | 2044 | 2050 |
| 3 | Ծնունդը | մարդ | 33 | 32 | 34 | 32 | 35 |
| 4 | Մահացությունը | մարդ | 20 | 15 | 16 | 17 | 20 |
| 5 | Աշխ.ռեսուրս. ա/թ | | | | | | |
| ա | զբաղվ.ըստ տնտեսության ճյուղերի | մարդ | 1200 | 1210 | 1220 | 1230 | 1240 |
| 6 | Գործազրկ .մակարդ. | % | 13 | 10 | 10 | 9 | 9 |
| 7 | Առևտրի և սպասարկ. օբյեկտների թիվը | հատ | 5 | 7 | 8 | 8 | 9 |
| 8 | Համայնքային ենթակայության գ/հ | հա | 82 | 82 | 82 | 80 | 80 |
| 9 | Համայնքային սեփ. հողերի օգտագ.մակարդ. | % | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| 10 | Խմելու ջրի ներհամայնք. համակարգի երկարությ. | կմ | 6.240 | 6.240 | 6.360 | 6.360 | 6.360 |
| 11 | Ներհամայնք.ոռոգման համակ.երկարությունը | կմ | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| 12 | Ոռոգվող հողերը | հա | 340 | 340 | 340 | 340 | 340 |
| 13 | Ներհամ.փողոցների և ճանապարհների երկ. | կմ | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| 14 | Չբարեկ.փողոցների և ճանապարհների երկ. | կմ | 5 | 5 | 4 | 3 | 3 |
| 15 | Բնակֆոնդ,այդ թվում | շենք/ | 357 | 358 | 359 | 360 | 360 |
| | ▪ մասնավոր | հազք մ | 452 | 452 | 452 | 453 | 453 |
| 16 | Բնակկարիքավոր ընտա-նիքների թիվը | ընտ | 30 | 29 | 28 | 27 | 27 |
| 17 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը | լ/օր | 15 | 20 | 25 | 30 | 35 |
| 18 | Ջրի կորուստները ներհամայնքային համակ | % | 30 | 25 | 20 | 15 | 15 |
| 19 | Սովորողների թիվը հանրակրթ.դպրոցում | մարդ | 255 | 260 | 273 | 273 | 273 |
| 20 | Երեխաների թիվը մանկապարտեզում | մարդ | 45 | 48 | 49 | 50 | 50 |
| 21 | Գ/պ և ենթակա կառուց-վածքների աշխ. թիվը | մարդ | 28 | 28 | 31 | 32 | 33 |